600.0247.22.07.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

22 հուլիսի 2020 թվականի №247Ա
քաղ. Երևան

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2020-2022 թվականների ներդրումային ծրագրին՝ համաձայն №№1-5 հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2020-2022 թվականների ներդրումային ծրագիրը կազմում է 13 877,4 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ հետևյալ հիմնական ուղղություններով.
   1) «Սևան» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 684,2 մլն դրամ.
   2) «Հրազդան» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 5 626,7 մլն դրամ.
   3) «Արգել» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 3 855,0 մլն դրամ.
   4) «Արզնի» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 2 437,1 մլն դրամ.

5) «Քանաքեռ» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 1 274,5 մլն դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
22 հուլիսի 2020թ.